

ՌՈՒՄ ԳՐՈՂՆԵՐԸ ԱՆԳՐԿՈՎԿԱՍՈՒՄ
ԵՎ ՀԱՅ ԳՐԱԿԱՆ ԿՅԱՆՔԸ (1914—1920)
ԱՆՈՒՇԱՎԱՆ ԶԱՔԱՐՅԱՆ

Հայ և ռուս ժողովուրդների քաղաքական, տնտեսական ու կուլտուրական կապերը դարերի պատմություն ունեն։ Այդ կապերի մեջ իրենց արժանի տեղն ունեն և գրական-մշակութային առնչությունները։ Հայ գրականագիտության մեջ այդ պրոբլեմի սարքեր կողմերի ուսումնասիրությունը մշտապես եղել է ուշադրության կենտրոնում։ Սակայն հայ-ռուս գրական կապերի պատմության հետադուտման գործում դեռևս կան բազմաթիվ այլ փոխառնչություններ, որոնք մինչ այժմ անհրաժեշտ ուշադրության չեն արժանացել, թեպետ գրապատմական որոշակի նշանակություն ունեն։ Դրանցից մեկը վերաբերում է XX դ. տասական թվականների կապերին, մասնավորապես՝ 1914—1920 թթ. Անդրկովկաս այցելած, այնտեղ ապրած ռուս գրողների գործունեությանն ու հայ գրական կյանքի, գրական գործիչների հետ նրանց ունեցած կենդանի, սխառեմատիկ շփումներին։

XX դ. տասական թվականների խնդրո առարկա տարիները հայ ժողովրդի կյանքի ամենաողբերգական ժամանակահատվածն էին, երբ, ինչպես հայտնի է, դրված էր հայ ժողովրդի գոյության հարցը։ Վերահաս համաշխարհային պատերազմի վտանգը օդի մեջ էր, որի նախազգացումը համայն Ռուսաստանի ժողովուրդների մտավորականությանը թելադրում էր մերձենալ իրար, համախմբվել՝ պատերազմական փորձություններին դիմակայելու համար։ Ահա այդ տարիներին է, որ ռուս մտավորականության, գրողների շրջանում հետաքրքրություն է բուրքեղում հայ ժողովրդի մշակութի ու պատմության հանդեպ, որի առաջին քայլերը կատարողները Մ. Գոռկին և Վ. Բրյուսովն էին՝ իրենց հայտնի նախաձեռնություններով։ Հանգամանքների բերումով գալով Անդրկովկաս, մասնավորապես Թիֆլիս, Բաքու և Նոռան, որոնցում և հիմնականում կենտրոնացված էր հայ մշակութային կյանքը, ռուս գրողները եռանդով մասսայականացնում էին ռուս գրականությունն ու արվեստները, միաժամանակ ծանոթանում տեղի ժողովուրդների, այդ թվում և հայ ժողովրդի կյանքին ու կենցաղին, պատմությանն ու մշակութին, իրենց բոլորանքով եր աշխատանքով կապող օղակ դառնում այդ ժողովուրդների միջև։

Այդ տարիներին ռուս գրողներից առաջինն Անդրկովկաս են այցելել ֆուտուրիստները. 1914 թ. մարտի վերջերին երկրամաս են գալիս Վ. Մայակովսկին (1893—1930), Դ. Բուրլուկը (1882—1967) և Վ. Կամենսկին (1884—1961)։ Նրանք նախ մարտի 23-ին այցելում են Թիֆլիս, որտեղ և մարտի 27-ին Արքունական օպերային թատրոնում հանդես են գալիս դասախոսության, կարգում իրենց ստեղծագործությունները՝ արժանանալով ջերմ ընդունելության։ Թիֆլիսում գտնվելու օրերին նրանք շրջում են քաղաքի տեսարժան վայրերում, շփվում հասարակականության, մասնավորապես երիտասարդության հետ։ Այդ օրերին նրանցից անբաժան էր հայ ֆուտուրիստ Կարա Դարվիշը։ Լրագրային հաղորդումից տեղեկանում ենք, որ «...մոսկովյան ֆուտուրիստներ Բուրլուկ, Մայակովսկի և Կամենսկի երեսները ներկած և պարական խայտաճամուկ շորեր հագած կառքով ման էին գալիս Թիֆլիսի փողոցներով. նրանց հետ էր և հայ գրող Կարա Դարվիշը...»¹։

Մարտի 28-ին ռուս ֆուտուրիստները մեկ օրով լինում են Վ. Մայակովսկու մանկության քաղաքում՝ Քոթայիսիում, ապա մեկնում՝ Բաքու և Բաքվի

ելույթով էլ նրանք ավարտում են իրենց շրջագայություն-դասախոսությունը Անդրկովկասում և վերադառնում Մոսկվա:

Ֆուտուրիստական հաջորդ իրադարձությունն Անդրկովկասում կապվում է Իգոր Աևերյանին (1887—1941) անվան հետ: Նա երկրորդ անգամ (առաջին անգամ՝ 1913 թ. աշնանը) Թիֆլիս է այցելում 1917 թ. հունվարի վերջերին, Հունվարի 26-ին, 29-ին և 30-ին քաղաքի երաժշտական ուսումնարանի դահլիճում², ապա Բաքվում հաջողությամբ տեղի են ունենում նրա «լուսեղ-երեկոները»:

Վերոգրյալ այցելություններից հետո Անդրկովկասի գրական շրջաններում, սկսած 1917 թ., ֆուտուրիզմը մեծ տարածում է գտնում. ստեղծվում են ֆուտուրիստական մի շարք խմբավորումներ: Թիֆլիսում Ա. Կրուչնիխի հիմնած «Պոետների ապաստարանում» ֆուտուրիստները, որոնց շարքերում կային նաև հայ և վրաց եղիտասարդ բանաստեղծներ, կադմակերպում են դրական երեկոներ, բանավեճեր և այլն: 1918 թ. կեսերից նկատվում են տարբեր խմբակցությունների մերձեցման միտումներ. ստեղծվում են «Կալլուդա» գեղարվեստական ընկերությունը կամ բյուրոն և «41» ընկերությունը: 1920 թ. Թիֆլիսի գրական կյանքում առաջատար դեր է նվաճում Գ. Խարազովի գլխավորած «Մոսկվայի ուսանողության ակադեմիական խմբակցությունը»՝ իր հայտնի «Բանաստեղծության ակադեմիայի» երեկոներով:

Ռուս ֆուտուրիստների մասին խոսելիս առանձնապես հաճ է նշել Վասիլի Կամենսկու անունը, որն ուսումնասիրվող ժամանակահատվածում, երբեմն երկար ժամանակով գտնվելով Անդրկովկասում, ծավալել է եռանդուն զործունեություն՝ հանդես եկել բազմաթիվ դասախոսություններով, կարդացել իր ստեղծագործությունները, գրել հոդվածներ, մեծապես շփոխել հայ գրական-մշակութային գործիչների հետ³:

Առաջին համաշխարհային պատերազմի նախօրեից, ըստ երևույթին, վարակված ֆուտուրիստներից, երկրի ներսում շրջագայություններ, այցելություններ են ձեռնարկում նաև խորհրդապաշտները՝ հասնելով նաև ծայրամասային Անդրկովկասի քաղաքները: Առաջինը լինում է Կոնստանտին Բալմոնտը (1867—1942), որը Ռուսաստանի մի շարք քաղաքներում կարդացած դասախոսություններից հետո՝ 1914 թ. ապրիլի 10-ին ժամանում է Թիֆլիս: Ապրիլի 13-ին և 14-ին Արտիստական ընկերության համերգային դահլիճում Բալմոնտը հանդես է գալիս «Բանաստեղծությունը որպես էպիսոդանք» և «Օկեանիա» վերնագրերով դասախոսությամբ: Ուշագրավ է, որ հենց առաջին դասախոսությունը «Մշակը» արձագանքում է քննադատաբար. «...գրվածքի արտաբերել մոգեռնիստներին հատուկ ձևը ունեն, ալոտ ու անորոշ, իսկ ներքինը՝ նա ճգնել էր փիլիսոփայական խորություն հաղորդել նրան», — նշում է թերթը, ավելացնելով, թե՛ «մեզ համար նրա հանգես գալու դժական կողմը այն է, որ մի անգամ ևս պառզ ցույց տալից, թե սիմվոլիզմն ու դեկադանսը հանձին իրենց նշանավոր ներկայացուցչի ո՛րքան հեռացել են իրական կյանքից, որքան ազդատ է նրանց հոգին՝ ըմբռնելու համար ժամանակակից իրականության լարերին»⁴: «Մշակի» պես հեղինակավոր պարբերականի խիստ արձագանքը խոսում է այն մասին, որ տասական թվադասների կեսերին խորհրդապաշտության դիրքերը րավականաչափ խախտում էին հայ իշխանության մեջ: Կ. Բալմոնտի երկրորդ բանախոսությունը վերաբերում էր Ավստրալիա կատարած նրա ուղևորությանը: Մամուլի կարճաժող հաղորդում-

2 «Кавказское слово», 28. I. 1917; 31. I. 1917; 2. II. 1917.

3 Անուշավան Զաքարյան, Վասիլի Կամենսկին Անդրկովկասում և հայ գրական կյանքը (ՀՍՍՀ ԳԱ «Հրաբեր հասարակական գիտությունների», 1983, № 7, էջ 14—24):

4 «Մշակ», 13. IV. 1914.

5 «Հորիզոն», 11. IV. 1914, «Մշակ», 13. IV. 1914.

6 «Մշակ», 15. IV. 1914.

ներից հետևում է, որ իր տպավորությունները պատմելու ընթացքում նա կարգացել է նաև ճամփորդության ժամանակ գրած «Սամոա» շարքի բանաստեղծություններից, Հատ երևույթին բանաստեղծություններն ընդունելություն են գտել հասարակայնության կողմից, և շարքից չորս բանաստեղծություն՝ «Սամոա», «Սամոացի կնոջը», «Սամոացին» և «Արմավենին», հայերեն թարգմանությամբ տպագրվել է «Հորիզոնի» մայիսի 11-ի և 18-ի համարներում:

Ամենայն հավանականությամբ այդ ժամանակներում բանաստեղծը արդեն մտադրվել էր թարգմանել Շ. Ռուսթավելու «Ընձենավորը» և այդ նպատակով էլ «Վրաց մեջ գրագիտություն տարածող ընկերությունը» նրան է նվիրել պոեմի պատկերազարդ հրատարակությունը⁷, Բալմոնտի պատվին վրաց հասարակայնության կազմակերպած ճաշկերույթին հրավիրվում է նաև Հովհ. Թումանյանը: Այդ օրն էլ Թումանյանն ու Բալմոնտը ծանոթանում են իրար հետ, երկար զրուցում: Դրանից առաջ, անցած դարի 90-ական թվականներին, ինչպես «Բալմոնտ» և Թումանյանը՝ հոգևածում գրում է Ի. Սաֆարզբեկյանը⁸, ռուս բանաստեղծը թարգմանել էր «Ախթամարը» և «Համերգը»: Նույն հոգևածում նա գրում է, թե ռուս բանաստեղծը Թիֆլիս է այցելել 1914 թ. ամռանը, մինչդեռ, ինչպես ասվեց՝ այցելել է ապրիլի 10-ին: Միաժամանակ Կ. Բալմոնտի 1917 թ. աշնանությունը համարվում է երկրորդ այցելություն, բայց, ինչպես կոխանենք, երկրորդը վերաբերում է 1915-ին, իսկ 1917-ինը ռուս բանաստեղծի երրորդ այցելությունն էր:

1914 թ. ապրիլի 15-ի երեկոյան⁹ Կ. Բալմոնտը Թիֆլիսից մեկնում է Բաքու, որտեղ ապրիլի 16-ին կրկնում է Թիֆլիսում կարդացած դասախոսությունը¹⁰, այդպիսով ավարտելով իր առաջին այցելությունն Անդրկովկաս: Երկրորդ անգամ Բալմոնտը Թիֆլիս է գալիս 1915 թ. սեպտեմբերի 30-ին¹¹, Հոկտեմբերի 3-ին Արտիստական ընկերության լեփ-լեցուն դահլիճում ներածական խոսքից հետո նա իր թարգմանությամբ կարդում է Ռուսթավելու «Ընձենավորը» նախերգանքը և առանձին հատվածներ: Ընդունելությունը լինում է աննախադեպ. վրաց հասարակայնությունը բանաստեղծին նվիրում է Ռուսթավելու դիմանկարը՝ «Վոնստանտին Բալմոնտին՝ վրացիներից» մակագրությամբ¹², վրացական կուլտուրայի սիրողների ընկերությունը հոկտեմբերի 9-ին Արտիստական ընկերության դահլիճում ռուս բանաստեղծի պատվին կազմակերպում է գրական-երաժշտական բաժիններով ճոխ երեկո, որին մասնակցություն է բերում հայ հասարակայնությունը: Հիշատակելի է, որ այդ ընթացքում Բալմոնտը հասցնում է հոկտեմբերի 8-ին դասախոսություն կարդալ նաև Քուֆայիսիում¹³:

Երրորդ անգամ Կ. Բալմոնտը Թիֆլիս է եկել 1917 թ. հունիսի 12-ին¹⁴, Այստեղ նախատեսված է եղել նրա երեք դասախոսությունը: Ռուս բանաստեղծի Թիֆլիս հասնելու հաջորդ օրը՝ հունիսի 13-ին, «Վոդրոդենիին» թերթը գետնել է դասախոսությունների ծրագիրը՝ վերնագրերն ու արժարժվող նյութը: I դասախոսություն՝ «Համաշխարհային հանճարների մտքերը սիրո մասին (Շոթա Ռուսթավելի: Իսպանական խոսքը սիրո մասին: Սրտերի մազնիսը: Սուրբ Թերեզա... Դանսի: Պետրարկա: Միքելանջելո: Տրիստան և Իզոլդա: Ռուսթավելու առաջնությունը)», II դասախոսություն՝ «Շ. Ռուսթավելու «Ընձենավորը» պոեմը», III դասախոսություն՝ «Խոսք ստեղծագործության մասին: Բնությունը որպես ցնծության հավիտենական արվեստանոց: Կրակի

⁷ Նույն տեղում:

⁸ «Գրական թերթ», 6. VIII. 1965:

⁹ «Մշակ», 17. IV. 1914:

¹⁰ Նույն տեղում, 18. IV. 1914:

¹¹ «Кавказское слово», 1.X.1915, «Հորիզոն», 2. X. 1915:

¹² Там же, 6.X.1915.

¹³ «Հորիզոն», 8. X. 1915:

¹⁴ «Возрождение», 13.VI.1917.

պոեմ: Ազատ Ռուսաստանի երգերը»: Հունիսի 16-ին Ն. ր ակումբի ձմեռային շենքում կայացել է Բալմոնտի առաջին դասախոսությունը: Իրագրական հաղորդումներից հետևում է, որ բանախոսության ընթացքում նա հիմնականում անդրադարձել է Ռուսթավելուն, նրա սիրո ըմբռնումները, փիլիսոփայությունը բարձր դասելով Ռուսթավելու ժամանակի և հաջորդ ժամանակների եվրոպական բանաստեղծներից: «Դա (Վերնիկովը) — Ան. Զ.) սիրո լավագույն պոեմն է, — շեշտել է ռուս բանաստեղծը, — որ երբևէ ստեղծվել է նվրոպայում՝ ծիծաղկոտ, թախծոտ, բոցավառվող, հակինթներով շողշողուն, սիրո ծիածան, երկինքն ու երկիրը կապող գունեղ ու կախարդական կամուրջ»¹⁵, Երկրորդ դասախոսությունը՝ դարձյալ Նոր ակումբում, նախատեսված է եղել հունիսի 18-ին¹⁶, իսկ երրորդի վերաբերյալ լրագրական տեղեկություն չհաջողվեց գտնել:

Անդրկովկասում, ապա և Կովկասյան հանքային ջրեղում Կ. Բալմոնտը անց է կացնում 1917 թ. ամբողջ ամառը, առիթի բեղումով շփվելով անդրկովկասյան ժողովուրդների մտավորականության ներկայացուցիչների հետ: Այսպես, օգոստոսի 3-ին նա հրավիրվում է Հովհ. Թումանյանի պատվին Պյատիգորսկում կազմակերպված հայկական երեկոյին: Ռուս բանաստեղծը հանապառատից Թումանյանին է նվիրում լայնորեն հայտնի բանաստեղծություն՝ արժանանալով հավաքվածների ջերմ ընդունելությանը¹⁷:

Բալմոնտի առաջին և երկրորդ այցելություններից սկսած նկատելի հասախականությամբ շարունակվում է ռուսական գրականության առավել ճանաչված ներկայացուցիչների այցելությունն Անդրկովկաս:

Ինչպես հայտնի է, առաջին համաշխարհային պատերազմի տարիներին հայ ժողովրդի հանդեպ ռուս մտավորականության անհող հետաքրքրության վկայություններից մեկը Վալերի Բրյուսովի կազմած ու խմբագրած «Հայաստանի պոեզիա» ժողովածուն է: Մինչև ժողովածուի հրատարակվելը ռուս նշանավոր բանաստեղծը եղել է Անդրկովկասում, տեղի հայ հասարակայնությանը ներկայացրել իր կատարած աշխատանքը, ինքն անձամբ մոտիկից ծանոթացել հայ գրողների, մտավորականների հետ, տեսել հայ ժողովրդի նիստուկացը: Վ. Բրյուսովը Անդրկովկաս, նախ Բաքու է եկել տեղի «Հայ գրասերների ընկերության» խորհրդի հրավերով՝ 1916 թ. հունվարի 7-ին: Հաջորդ օրը նա Մայիլյանների լեռ-լեռնային թատրոնում կարդում է «Հայոց բանաստեղծությունը» վերնագրով դասախոսությունը, որը քաղաքի հասարակայնության կողմից արժանանում է ջերմ ընդունելության ու բարձր գնահատանքի: Այնուհետև Վ. Բրյուսովը այդ նույն դասախոսությամբ հունվարի 13-ին հանդես է գալիս Թիֆլիսում, 17-ին՝ Էջմիածնում, 18-ին՝ Երևանում, իսկ հունվարի 22-ին Թիֆլիսում կարդում է «Հայաստանի պատմական շրջանները և հայ բանաստեղծության զարգացումը» թեմայով զեկուցում: Ռուս բանաստեղծի դասախոսությունները, բացառիկ ընդունելության արժանանալով: լայն արձագանք են գտնում հայ, ռուս և վրաց մամուլում: Տպագրվում են տառնակ հոդվածներ ու հաղորդումներ. որոնցում ըստ արժանվույն գնահատվում է նրա պատվավոր գործը: Անդրկովկասում Վ. Բրյուսովը շփվում է հայ մշակույթի բաղձաթիվ երախտավորների հետ, մասնավորապես մտերմանում է Հովհաննիս Հովհաննիսյանի և Հովհաննես Թումանյանի հետ: Ամենօրյա հանդիպումների ու զրույցների ընթացքում նա ճշտում է հայոց բաղձադարյան բանաստեղծության գնահատության իր ընդհանուր ելակետերը, առանձին բանաստեղծների մասին իր տեսակետները, որոնք իրենց որոշակի հետքն են թողնում Վ. Բրյուսովի գաղափարա-դեղագիտական հայացքների վրա: Հունվարի 24-ին ռուս բանաստեղծը Թիֆլիսից մեկնում է Մոսկվա:

Վ. Բրյուսովը երկրորդ անգամ Բաքու է գալիս դարձյալ «Հայ գրասերների

¹⁵ Նույն տեղում, 18.VI.1917.

¹⁶ Նույն տեղում:

¹⁷ «Кавказское слово», 18.VIII.1917; «Армянский вестник», 1917, № 35—36, с. 21; № 37—38, с. 13.

ընկերության» հրավերով՝ 1917 թ. հունվարի 17-ին, Հունվարի 19-ին Թադիկի թատրոնում նա հանդես է գալիս «Էմիլ Վեոհարն և հերոսական Բելգիան», 24-ին՝ «Ուսուցիչների ուսուցիչները (մարդկության հնագույն մշակույթների մասին)» վերնագրերով դասախոսություններով, իսկ 29-ին Հասարակական մոլորակարանի դահլիճում Ա. Ս. Պուշկինի մահվան 80-ամյակի առթիվ կարգում է նրա հասարակական հույսերը վերաբերող զեկուցում։ Բաքվում գտնվելու օրերին Վ. Բոլուսովը մեծապես շփվում է հայ հասարակայնության տարբեր խավերի հետ, մասնակցում նրանց կադմակերպած միջոցառումներին։ Փետրվարի սկզբին ռուս բանաստեղծը մեկնում է Մոսկվա¹⁸։

Վ. Բոլուսովի 1916 թ. հունվարի այցելությունից հետո խորհրդապաշտներից հաջորդ այցելուն լինում է Ֆեոդոր Սոլոգուբը (1863—1927), որը Թիֆլիս է հասնում 1916 թ. ապրիլի 19-ին¹⁹, Հաջորդ օրը՝ ապրիլի 20-ին, Արտիստական ընկերության դահլիճում Ֆ. Սոլոգուբը հանդես է գալիս «Ռուսաստանը երազների ու սպասումների մեջ» ծավալուն դասախոսությամբ²⁰։ Հարկ է ավելացնել, որ մինչև Թիֆլիս գալը նա հունվարի 24-ին նույն վերնագրով դասախոսություն է կարդացել Նոր Նախիջևանում, իսկ Տաֆանդոգում տեղական իշխանությունները արգելել էին այն։ Թիֆլիսում կարգավիճակ դասախոսության թեզերը՝ շոշափվող բազմապիսի հարցերով, իր էջերում վաղորդը հրապարակում է «կավկասյան սլովոն»²¹, Ինչպես երևում է գրանցից, Ֆ. Սոլոգուբը դասախոսության ընթացքում հիմնականում կանգ է առել ռուս գրականության հայրենասիրական գաղափարների ու մոտիվների վրա, Ռուսաստանի և ռուսական դրականության համար կանխատեսելով պատմական մոտավորում նոր առաքելություն։

Առաջ անցնելով նշենք, որ Ադրբեջանում սովետական կարգեր հաստատվելուց հետո, 1920 թ. աշնանը, հանգամանքների բերումով Բաքու է գալիս ռուսական խորհրդապաշտների ճանաչված տեսաբան Վյաչեսլավ Իվանովը (1866—1949), Բնութագրական է նրա առաջին հանդիպումը Բաքվի հասարակայնության հետ. զեկտեմբերի կեսերին Լև Տոլստոյի մահվան 10-ամյակի առթիվ նա կարդում է Տոլստոյին նվիրված դասախոսություն²², որի մասին, սակայն, այլ արձագանքներ չգտանք։ Նույն օրերին լրագրողների ընդհանուր ժողովում Ս. Գորոդեցկու հետ միասին Վ. Իվանովը ընտրվում է քաղաքում հիմնվող «Մամուլի տան» հանձնաժողովի անդամ²³, Թերթյային հաղորդումներից տեղեկանում ենք, որ սպասվել է նրա այցը Թիֆլիս²⁴։

1916—1921 թթ. Անդրկովկասում, մասնավորապես Թիֆլիսում և Բաքվում ապրել ու գործել է ռուս բանաստեղծ Սերգեյ Գորոդեցկին (1884—1967)։ Նրկրամասում ծավալած դրական, հասարակական, հրատարակչական բազմաբնույթ գործունեության ընթացքում նա լայնորեն շփվել է հայ գրական-մշակութային գործիչների հետ, հետևողականորեն իր ձայնը բարձրացրել հանուն ազգերի հղրաշարական համերաշխության²⁵։

18 Վ. Բոլուսովի անդրկովկասյան ուղևորությունների մասին մանրամասն տե՛ս Ա. Հ. Զաքարյան, Վալերի Բոլուսովը Անդրկովկասում և հայ դրական կյանքը («Պատմա-բանասիրական հանդես», 1983, № 2—3, էջ 74—88)։ Հոգվածի ռուսերեն ամփոփման մեջ (էջ 88) 1917 թ. Բաքվում Վ. Բոլուսովի կարդացած առաջին դասախոսության օրը նշված է հունվարի 17-ը. պետք է լինի՝ 19-ը։

19 «Մշակ», 20. IV. 1916։

20 «Кавказское слово», 16.IV.1916; «Մշակ», 20.IV.1916, «Հորիզոն», 17.IV.1916, «Գաղափար», 17.IV.1916։

21 «Кавказское слово», 16.IV.1916։

22 «Слово», 14.XII.1920։

23 Նույն տեղում, 23. XII. 1920։

24 Նույն տեղում, 26. XII. 1916։

25 Անդրկովկասում Ս. Գորոդեցկու գործունեության մասին տե՛ս՝ Ա. Նուշադյան Զաքարյան, Սերգեյ Գորոդեցկին Երևանում (1919 թ. ապրիլ), (ՀՍՍՀ ԳԱ «Նորարար հասարակական գիտությունների», 1981, № 6, էջ 53—64), նույնի՝ Ս. Գորոդեցկու հիմնած Թիֆլիսի «Բանաստեղծների համադրությունը» և նրա «Ակմե» ժողովածուն (նույն տեղում, 1932, № 12,

1916 թ սեպտեմբերի 1-ի համարներում «Մշակը», «Հորիզոնը» և «Կապ-կազակոյն սլովոն» ղեկավարում են հայտարարություններ, ըստ որոնց գրական էրեկտների հայտնի կազմակերպիչ Ֆ. Դոլիձեի նախաձեռնությամբ աշնանը դասախոսություններ կարդալու համար Անդրկովկաս են գալու Ա. Կուլարինը, Լ. Անդեռեը, Կ. Բալմոնտը և Ի. Սևերյանինը: Եվ ահա, թվարկված գրողները, բացառությամբ Լ. Անդեռեի, լինում են Անդրկովկասում: Նրանցից առաջինը երկրամաս է գալիս Ալեքսանդր Կուլարինը (1870—1938): Նախնական հայտա-րարությամբ գրողի դասախոսությունները պետք է տեղի ունենային սեպտեմ-բերի 13-ին և 14-ին: Սակայն դրանք տեղի են ունենում հոկտեմբերի 1-ին և 2-ին²⁶, Ռուս նշանավոր գրողը Թիֆլիս է հասնում սեպտեմբերի 27-ին²⁷, Հոկ-տեմբերի 1-ին Նրաժնտական դպրոցի լեզ-լեցուն դահլիճում Կուլարինը բանա-խոսում է «Ռուս գրականության ճակատագիրը Պուշկինից մինչև Չեխով» թե-մայով: Մամուլի հաղորդումներից հայտնի է դառնում, որ գրողի դասախո-սությունը մատնվել է անհաջողության: Ա. Կուլարինը, լինելով առաջնորդող գրչի մարդ, օժտված չէր բանավոր խոսքով ունկնդիրներ զրավելու ձիրքով: Կամենսկին իր «Նշտուլիաստի ուղին» ինքնակենսագրական գրքում մտա-բերում է. «Անսպասելիորեն Թիֆլիս եկավ Կուլարինը՝ դասախոսություն կար-դալու «Ռուս գրականության ճակատագիրը» թեմայով:

Ես զարմացած էի. Կուլարինը երբեք դասախոսություններ չէր կարդում, չէր շրջագայում:

Բայց մեր հանդիպման առաջին իսկ պահին Կուլարինը բացատրեց. «...Դը-րանում մեղավոր է իմ անտրեպրենյոր Դոլիձեն: Ես նրան ասում էի, որ դա-սախոսություններ կարդալ չեմ կարող: Սակայն մի կերպ գլուխ կհանեմ, Կըս-կըսեմ Տոլստոյի, Չեխովի, Դորկու հետ: հանդիպումներից և կվերջացնեմ ֆու-տուրիստներով»²⁸,

Դասախոսությունը, ինչպես ասվեց, մատնվում է անհաջողության՝ այն համարվում է «զեչ անեկդոտ»²⁹: Այնուհանդերձ մամուլը նշանավոր գրողի բանախոսությանը հատկացրել է լայն տեղ՝ ղեկավարելով ծավալուն հաղորդում-ներ: Դրանցից պարզվում է, որ դասախոսը նախ անդրադարձել է Պուշկինին, համեմատել նրան Պետրոս Մեծի հետ, ապա և մատնանշել նրա՝ թողած ազ-դեցությունը ռուս գրականության հետագա սերունդների վրա: Այս նախաբա-նից հետո, ինչպես տեղեկացնում է «Մշակը», «Կուլարինը փոխանակ ռուս գրականության աստիճանական զարգացումը տալով՝ կրմոնտովին հիշելով բուլմաթիվ գրողների վրայից լոք տվեց անցավ Չեխովին և պասմեց իր անձ-նական ծանոթությունը նրա հետ, ընդգծելով միաժամանակ Չեխովի զարմա-նալի պարզությունը գրականության մեջ»³⁰: «Այն մեթոդը, որ կիրառել էր Կ. դասախոսը,— կարդում ենք մամուլում,— բնականաբար չպետք է հանդիպեր հաջողության: Կասկածից վեր է, որ մի երկու ժամվա մեջ չէր կարելի մոտ կես դարվա ռուս գրականության մասին խոսել, թեև լուզ մի թուուցիկ գաղափար տալ ունկնդիրներին»³¹:

Հաղորդումներից տեղեկանում ենք նաև, որ կարճատև ընդմիջումից հե-տո, «զգալով իր սխալը», դասախոսը դիմել է հասարակայնությանը անկեղծ խոստովանությամբ. «Պետք է խոստովանեմ ճշմարտությունը... ես վատ դա-սախոս եմ: Այն նյութը, որ ես վերցրել եմ, ինչպես երևում է, իմ ուժերից

էջ 44—56), նույնի՝ Սևերյան Դորոգեկին Անդրկովկասում և հայ գրական կյանքը (1916—1921), (նույն տեղում, 1984, № 2, էջ 22—33):

26 «Հորիզոն», 8. IX. 1916, «Մշակ», 10. IX. 1916, «Кавказское слово», 7. IX. 1916.

27 «Մշակ», 29. IX. 1916, «Հորիզոն», 29. IX. 1916:

28 В а с и л и й К а м е н с к и й, Путь энтузиаста. Автобиографическая книга, Пермь, 1968, с. 196.

29 «Кавказское слово», 5.X.1916.

30 «Մշակ», 4. X. 1916:

31 «Հորիզոն», 4. X. 1916:

բարձր է, ուստի թույլ տվեք իմ գրվածքներից մի քանի կտոր կարդալ ձեզ»³²։ Այնուհետև նա կառգացել է մի քանի հանրաժանութ պատմվածքներ և արտասանել իր թարգմանությունը Բերանժեի բանաստեղծություններից։ Դարձյալ մամուլից տեղեկանում ենք, որ, ընայած դասախոսության անհաջողությանը, հասարակայնությունը «երկարատև ծափահարություններով» շնորհակալություն է հայտնել գրողին, իսկ Թիֆլիսի գիմնազիայի աշակերտներն ու ֆուտուրիստները Վ. Կամենսկին և Վլ. Հոլցշմիդտը մատուցել են ծաղիկներով դամբուղներով։

Կուպրինի երկրորդ դասախոսությունը՝ «Ռուս գրականությունը Չեխովից մինչև մեր օրերը» թեմայով դարձյալ նույն Նրաժշտական դպրոցի դահլիճում տեղի է ունենում հոկտեմբերի 2-ին՝ «Մշակի» հաղորդումից տեղեկանում ենք, որ «ծայրեծայր լիքը» դահլիճում «դասախոսը իր սեղ ժամանակակից ռուս գրականության մասին, կենդանի լեզվով պատմելով իր տպավորությունները և գիտությունները Չեխովից սկսած մինչև ֆուտուրիստները, որոնց մասին, ի միջի այլոց, մեծ գովեստով խոսեց, նկատելով նրանց գովածքի մեջ առ-դանդ»³³։ Սակայն այս անգամ ևս դասախոսությունը անհաջողության է մատնվում, և ղգալով դա, գրողը կարդում է «Ինչպես ես դարձա դերասան» պատմվածքը։

Թիֆլիսում գտնվելու շուրջ տասնհինգ օրերի ընթացքում Ա. Կուպրինը շրջում է քաղաքում, լինում հիշարժան վայրերում, շփվում հայ և վրաց մտավորականության հետ։ Հոկտեմբերի 7-ին Կարա Դարվիշի, Վլ. Հոլցշմիդտի և կրկեսային ըմբիշ Ի. Զաիկինի ուղեկցությամբ Կուպրինը լինում է Տ. Նադարյանի գրական-դեղարվեստական սալոնի հերթական ուրբաթի պատվավոր հյուրը, այնտեղ հավաքված հասարակայնության կողմից արժանանում ջերմ ընդունելության³⁴։ Մի շարք անգամ գրողը այցելում է Յֆիմով եղբայրների կրկեսը, առաջին իսկ այցելության օրը ընտրվում ըմբշամարտը գլխավորող Ժյուրիի նախագահ։ Իսկ հոկտեմբերի 9-ին Նրաժշտական դպրոցի դահլիճում նախատեսված էր գրական երեկո՝ Ա. Կուպրինի, Վ. Կամենսկու, Վլ. Հոլցշմիդտի և Ի. Զաիկինի մասնակցությամբ, որտեղ վերջինս պետք է կարդար ռեֆերատ՝ «Մպրոտի վերածնությունը» թեմայով³⁵։

Ա. Կուպրինի Թիֆլիսյան այցելությունը ավարտվում է հոկտեմբերի 11-ին, երբ նա այնտեղից մեկնում է Բաքու³⁶։ Հոկտեմբերի 12-ին ռուս գրողը Բաքվի հասարակական ժողովարանի դահլիճում կարդում է «Ռուս գրականությունը Չեխովից մինչև մեր օրերը» վերնագրով դասախոսությունը։ «Արև» թերթի ընդարձակ հաղորդումից տեղեկանում ենք, որ դասախոսը անդրադարձել է Տոլստոյին, Դոստոևսկուն, Չեխովին, Գորկուն, Անդրեևին, «դեկադենտական շկոլայի» հիմնադիր Բալմոնտին, ֆուտուրիստներին։ Ոգեշունչ է եղել նրա խոսքը մասնավորապես Մ. Գորկու մասին։ «Գորկին մի մրրկահավ էր մեր գրականության նոր շրջանի համար,— նշել է Ա. Կուպրինը,— Դժվար է ասել, դարաշրջանը ստեղծեց Գորկուն, թե Գորկին—դարաշրջանը։ Բայց պետք է ասել, որ նրա ազդեցությունը ժամանակի վրա շատ է մեծ։ Ռուս մարդու անբավականության և որոնումների առաջին արտահայտիչը եղավ Դոստոևսկին (Идиот)։ Այդ անբավականությունն ու սրոնումները նոր երանգ են ստանում Գորկու ստեղծագործության մեջ։ Պայծառ ապագայի նկատմամբ Գորկու ստեղծագործությունը մեծ լավատեսությունը գերակշռող գիծ է։ «Лето-письмо»-ի այս տարվա համարներում նա իր հիշողություններով վերադառնում է մայրենի բնությանը։ Նա շատ է սիրում կեսօրվա տապն ու արևը։ Ձմեռվա սառնամանիքներին անգամ նրա արևի նկարագրությունից ջերմություն է

32 «Մշակ», 4. X. 1916; Հմմտ. «Հորիզոն», 4. X. 1916, «Кавказское слово», 5. X. 1916

33 «Մշակ», 6. X. 1916:

34 Նույն տեղում, 11.X.1916, «Кавказское слово», 9.X.1916.

35 «Հորիզոն», 6. X. 1916:

36 Նույն տեղում, 12.X.1916, «Մշակ», 12.X.1916, «Кавказское слово», 12.X.1916.

դգացվում»³⁷։ Շեշտելով մի կողմից Գորկու անբավականությունը կյանքից, մյուս կողմից՝ ապագայի լավատեսական հավատը, Կուպրինը, կարծես, հուշում է և սեփական գրական-հասարակական հավատամքը։ Հետաքրքիր է, որ գրողի դասախոսություններում առհասարակ լուծության է մատնվում պատերազմը։ Ինչպես հայտնի է, «Հեստպիսի» ուղղությունն ամենից առաջ հասկանալովում է ինտերնացիոնալիստական և հակապատերազմական բնույթով, և, դրվասելով ամսագիրը, անշուշտ, Կուպրինը համամիտ էր և գնահատում էր նախ ամսագրի հիմնական ուղղությունը։ Գրապատմական տեսակետից ուշուգրավ է նաև, որ Գորկու անբավականության հարցը շոշափելիս նա ուղղակի առնչություն է տեսնում նրա և Դոստոևսկու ստեղծագործության միջև։

Գորկու ստեղծագործության ներշնչված պրոպագանդան եղել է Կուպրինի դասախոսության մեխը, և սխալվում է հոգվածագիրը, երբ դրում է, թե «դասախոսության մեջ բացակայում էին առաջնորդվող տեսակետները»։ Ինչ վիտարելու է դասախոսի հոնստության շնորհքին, ապա այստեղ ևս գրողը անկեղծորեն խոստովանել է, որ «գուրկ է» այդպիսի շնորհքից և ներածականից հետո գերադասել է կարգալ իր պատմվածքները։

Ա. Կուպրինից հետո Անդրկովկաս է այցելել արձակագիր, դրամատուրգ Եվգենի Չիրիկովը (1864—1932), որը Թիֆլիս է ժամանել 1917 թ. փետրվարի վերջերին³⁸։ Մինչև Թիֆլիս հասնելը Չիրիկովը հաջողությամբ դասախոսություններ է կարդացել խարկովում, Ռոստովում, Եկատերինոդարում և այլ վայրերում, և, ահա, փետրվարի 25-ին Նրաժշտական ուսումնարանի դահլիճում տեղի է ունենում նրա դասախոսությունը՝ «Ռուսական ժողովրդական հեքիաթները» թեմայով³⁹։ Ըստ երևույթին դասախոսությունն առանձին ընդունելություն չի գտնում, քանի որ չհաջողվեց արձագանքներ գտնել մամուլում, և հետո՝ փետրվարի 27-ին Չիրիկովն արդեն պետք է լիներ Բաքվում, որտեղ Հասարակական ժողովարանի դահլիճում նախատեսվում էր նրա դասախոսությունը «Ժողովրդի հոգին» վերնագրով⁴⁰։ Ինքնուրույն գտնված օրերին գրողը, ամենայն հավանականությամբ, չփուններ է ունեցել տեղի հայ մտավորական շրջանների հետ, քանի որ Զավախեցու թարգմանությամբ «Գործ» ամսագրում տպագրվել է նրա «Կյանքի շեմքին» գրվածքը (1917, № 11—12)։

Անդրկովկասի դեմոկրատական զանգվածների միջավայրում տարած ռուսագուն գործունեությամբ առանձնանում է Ռյուրիկ Իվնևր (Միխայիլ Ալեքսանդրովիչ Կովալով)։ Նա Թիֆլիս՝ իր ծննդավայրն էր եկել 1919 թ. սեպտեմբերին։ Սեպտեմբերի 21-ին կազմակերպվում է Ռ. Իվնևրի մեծ աղմուկ հանած դասախոսությունը՝ «Քսան ամիս Սովետական Ռուսաստանում» թեմայով⁴¹։ Թերթային մի հաղորդումից տեղեկանում ենք, որ սեպտեմբերի 22-ին նոր հրատարակվող «Պոնեգելնիկ» թերթի առաջին համարում զետեղված են Իվնևրի բանաստեղծությունները և «Քսան ամիս Սովետական Ռուսաստանում» վերնագիրը կրող հարցազրույց⁴²։ Կարելի է ենթադրել, որ «Պոնեգելնիկը» պետք է հրատարակվեր Իվնևրի կամ նրա համախոհ բարեկամների նախաձեռնությամբ. գուցե և առաջին իսկ համարից թերթը բռնագրավվել է, համենայնդեպս նշված հայտարարությունից բացի, չհաջողվեց գտնել այլ արձագանք։

Ռ. Իվնևրի վերգործալ դասախոսությունը կրկնվում է հոկտեմբերի 7-ին՝ լայնորեն ապահովելով առաջավոր մտավորականության, ուսանող երիտասարդության անկեղծ համակրանքն ու աջակցությունը։ Այնուհետև Իվնևր դասախոսություններ է կարդացել Քուսախիսիում, ապա վերադառնալով Թիֆլիս, նոյեմբերի 25-ին Գեղարվեստական խմբակում բանախոսել է «Սիրտ և մահ»

37 «Արև», 14. X. 1916։

38 «Հորիզոն», 23.II.1917, «Մշակ», 23.II.1917, «Кавказское слово», 24.II.1917.

39 «Հորիզոն», 25. II. 1917։

40 «Արև», 19. II. 1917։

41 «Աշխատավոր», 21. IX. 1919, «Возрождение», 21. IX. 1919.

42 «Возрождение», 21.IX.1919.

վան մասին» թեմայով, իսկ դեկտեմբերի 9-ին նույն խմբակի հավաքույթում կազմակերպվել է նրա «Ալքեր, որոնք չեն տեսնում» պիեսի հեղինակային ընթերցումը: Ըստ երևույթին այս օրերին էլ իվներ դասախոսություններ կարողալու հրավերով մեկնում է Բաքու, որի հետ կապված դեպքերն ու հանգամանքները «Մտացմինդայի ստորոտում» ինքնակենսագրական վիպակում (Մոսկվա, 1973) մտաբերվում են հետաքրքիր դրվագներով: Բաքվի նավթագործների ակումբում՝ աղբբջանցիների, հայերի, ռուսների ինտերնացիոնալ հասարակայնության առջև իվներ կարդում է դասախոսություն՝ թվարկելով Սովետական Ռուսաստանի կուլտուր-լուսավորական նախաձեռնությունները: Նավթագործ բանվոր-ծառայողների, քաղաքի մտավորականության բուռն ընդունելությանը արժանացած այդ դասախոսությունից հետո նախատեսված հաջորդ դասախոսություններն արգելվում են:

Սակայն ակնհայտորեն գնալով աճում էր սովետական երկրի հեղինակությունը, ավելանում էր նրա հաջողությունները պրոպագանդիստների թիվը: Հիշարժան է, որ իվները անմիջապես հետո, 1920 թ. հունվարի 7-ին «Բանաստեղծների ստուդիայում» Ռուսաստանից Բաքու ժամանած բանաստեղծ Ռոշանը կարդացել է էջեր սովետական պոեզիայից: «Նաշե վրեմյա» թերթի հավորդումով շուտով Ռոշանը պետք է զեկուցում կարդար Սովետական Ռուսաստանի կուլտուրական ձեռնարկումների վերաբերյալ⁴³:

Վերադառնալով Թիֆլիս, Ռ. իվներ 1920 թ. հունվարի 4-ին և հունիսի 24-ին Կոնսերվատորիայի դահլիճում հանդես է գալիս «Լենինը» և Ռուսաստանը» և «Ռուսաստանը և Լեհաստանը» զեկուցում-դասախոսություններով: Դասախոսությունների ընդունելության սարսափից արձակվում է իվներին ձերբակալելու հրաման, բայց նրան հաջողվում է թաքնվել, ապա գաղտնի անցնել Հայաստան: Սակայն նախօրոք հայտարարված իվների դասախոսությունները արգելվում են նախ Կարսում, որտեղ անցել էին նրա վաղ պատանեկության տարիները, և ապա Ալեքսանդրապոլում: Խուսափելով հետապնդումներից, իվներ նորից գաղտնի վերադառնում է Թիֆլիս, և 1920 թ. աշնանը մեկնում Մոսկվա: Նոյեմբերի վերջերին նա արդեն Մոսկվայում էր:

Մտաբերելով իր հանդիպումը Մ. Գորկու և Ան. Լունաչարսկու հետ 1920 թ. դեկտեմբերին Մոսկվայում՝ Ստ. Շահումյանի այրու բնակարանում, Ա. Միկոյանը գրում էր, թե զրույցի ժամանակ Մ. Գորկին իրեն դիմել է հարցով. «—Դուք, կարծեմ, վերջե՞րս եք եկել Կովկասից: Ի՞նչ նորություններ կան այնտեղ գրական կյանքում:

Անկեղծորեն ասած, — շարունակում է հուշագիրը, — ես շփոթվեցի, քանի որ ոչինչ չկարողացա պատասխանել նրան... Ինձ փրկեց Լեոն Շահումյանը, պատմելով վասիլի Կամենսկու, Սերգեյ Գորոդեցկու, Ռյուրիկ իվներին մասին, որոնց հետ նա հանդիպումներ էր տնեցել Թիֆլիսում, որտեղ այն ժամանակ դեռևս տեղ ու տնօրինություն էին անում մենշևիկները: Շահումյանն ասաց, որ այդ բանաստեղծները հաճախ հանդես են գալիս դասախոսություններով, կարդում իրենց բանաստեղծությունները, մի խոսքով, իրենց շատ արժանավայել են պահում և, դատելով ըստ ամենի, միանգամայն պրոսովետական տրամադրություններ ունեն»⁴⁴:

Գրապատմական փաստերը գալիս են հավաստելու ու նաև լրացնելու Մ. Գորկուն հետաքրքրած հարցի պատասխանը. պրոսովետական պահվածքով բնութագրվում է Ս. Գորոդեցկու գործունեությունը, ինչ վերաբերում է Վ. Կամենսկուն և Ռ. իվներին՝ պետք է ասել ավելին: Նրանց երկուսին էլ բախտ էր վիճակվել հենց Մոսկվայում տեսնել և իրենց մասնակցությունը բերել սովետական իշխանության առաջին տարիների գրական — մշակութային եռուն կյանքին: Դալով Անդրկովկաս և՛ մեկը, և՛ մյուսը, իհարկե, տարբեր ճանապարհներով, էապես շարունակում են այդ գործունեությունը, իրենց լուման

⁴³ «Наше время», 11.I.1920.

⁴⁴ Ա. Ի. Միկոյան, Քսանական թվականների սկզբին, Երևան, 1978, էջ 22: Լրաբեր 8—3

բերելով Անդրկովկասի ժողովուրդների միջավայրում սովետական նոր դաշակարարխոսության, գրականության ու մշակույթի ձևավորմանը:

1920 թ. ապրիլ ամսից Թիֆլիսում է եղել արձակագիր Բորիս Լադարևսկին (1871—1936)⁴⁵: Նա գրում էր պատմվածքներ գլխավորապես սիրային ապրումների թեմաներով՝ Չեխովի հետևելով և հաճախ ընդօրինակելով Չեխովին, իհարկե, երբեք չմերձենալով մեծ գրողի գեղարվեստական-գաղափարական ընդհանրացումներին: Նա իրեն համարում էր կանացի սեռի հոգեբան—մասնագետ, որը վկայում են նրա գրքերի վերնագրերը. «Վենյա (մի կնոջ հոգու պատմություն)», «Կնոջ հոգին» և այլն: Իր այդ նախասիրությամբ էլ նա ներկայանում է Թիֆլիսում: Ապրիլի 29-ին կոնսերվատորիայի լեփ-լեցուն դահլիճում Բ. Լադարևսկին կարդում է դասախոսություն «Հայաստանի օրիորդները և կանայք» թեմայով: Դասախոսությանը վերաբերող հայտարարություն մեջ ասվում էր, թե «դասախոսը հայտնի է որպես դիտող և գիտնական իզական սեռի ուսանող երիտասարդության հոգեբանության» և որ՝ «լի-նելով Ռոստոմով, Արմավիրում, Թիֆլիսում և Երևանում, հարգելի վիպագիրը կարողացել է ավելի մոտիկից ծանոթանալ և ուսումնասիրել հայ կնոջ և օրիորդի բնավորությունը, նրա դեպի լույսն և գիտությունը ձգտող անվերջ տրագեդիան, որը և կազմում է նրա դասախոսության նյութը»⁴⁶:

Բ. Լադարևսկու դասախոսությունը, բնականաբար, մեծ հետաքրքրություն է առաջացնում քաղաքի հայ հասարակայնության շրջաններում: Հարցը վերաբերում էր տասնամյակներ շարունակ խոսք ու զրույցի առարկա դարձած հայ կնոջ վիճակին ու ակնկալվող դերին և, հասկանալի է, արժանանում է հայ մամուլի արձագանքներին, որոնք պարունակում են նաև բանախոսին վերաբերող դիտողություններ: Այսպես, օրինակ «Նոր աշխատավորը» հաղորդում է, թե՝ «դասախոսությունը բառիս ընդունված իմաստով, իհարկե, չի կարելի անվանել հարգելի բեկեթրիստի ատենախոսությունը: Դրանք ավելի շուտ մտերմական շրջանում արտահայտված մտքեր ու պարունակ են հայ կնոջ հատկանիշների վերաբերմամբ, քան թե լայն դասախոսություն... Կային, իհարկե, մի շարք չափազանցություններ ու ոչ ճիշտ մեկնաբանություններ՝ բխող նյութի նորությունից ու կարճատև ուսումնասիրությունից: Բայց ընդհանուր առմամբ հոգեբանական սխեման և մասնավորումները միանգամայն ճիշտ էին և զարմանալի նրբությամբ ըմբռնված: Հայ օրիորդի հոգեբանական պորթրետի լուծումը ավելի աջող էր և զերծ վրիպումներից, քան հասակավոր կանանց և տիկնանց: Իբրև հայ ժողովրդի դարավոր տանջանքի, ցավի ու զուլումի արտահայտիչ է հանդես գալիս հայ օրիորդը իր եզակի գեղեցիկ աչքերով, հենց այնպես, ինչպես Դոստոևսկին ապրելով ու վերապրելով կյանքի տանջանքները, պահեց նրանց իր շտեմնված գեղեցիկ աչքերի խորքում»⁴⁷: Որքան էլ «հոգեբանական սխեման և մասնավորումները» ճիշտ են, դժվար չէ որոսալ, որ Լադարևսկու դատողությունները ռենեն մի հիմնական թերություն. դրանք էապես վերացական են, զուրկ սոցիալ-տնտեսական, հասարակական հիմնավորումներից: Այդուհանդերձ, նշված հասկանալի շարժառիթներով դասախոսության առաջ բերած հետաքրքրությունն այնքան էր մեծ, որ այն նախատեսվել է նաև մայիսի 2-ին⁴⁸:

Ուշագրավ է, որ հենց այդ օրը, Լադարևսկին այցելել է Հովհ. Թումանյանին: Վկայությունը Թումանյանների ընտանեկան ալբոմում նրա ձեռքով գրված տողերն են. «Սիրելի՛ պոետ... Հայաստանը կհանգստանա այն ժամանակ, երբ սերը մերձավորի հանդեպ ֆիկցիայից կդառնա իրականություն:

Նվ այդ մեծ գործում պետք է հսկայական դեր խաղան Հայաստանի աղ-ջիկներն ու կանայք և բանաստեղծները»⁴⁹:

⁴⁵ «Слово», 14. IV. 1920.

⁴⁶ «Նոր աշխատավոր», 27. IV. 1920:

⁴⁷ Նույն տեղում, 30. IV. 1920:

⁴⁸ «Слово», 30. IV. 1920.

⁴⁹ Հովհ. Թումանյանի տուն-թանգարտն, ընտանեկան արխիվ:

Վերագրյալին ավելացնենք, որ 1916 թ. աշնանը կարճատև այցով Թիֆլիսում է եղել և ելույթներ ունեցել ռանաստեղծ Նիկոլայ Կլյուևը (1884—1937), 1918 թ. կեսերից Անդրկովկասում հայ ժողովրդի արդար դատի պաշտպանության ու պրոլետարական կուլտուրայի գործին ծառայել է Պյոտր Սիրիրցևը⁵⁰, 1920 թ. սեպտեմբեր-հոկտեմբերին Թիֆլիսում է գտնվել, դասախոսություններ կարդացել և մամուլում Վ. Բոլունովին, Կ. Բալմոնտին, Ալ. Բլոկին ու Վ. Մայակովսկուն նվիրված արժեքավոր հոդվածներով հանդես եկել նաև Իլյա Էրենբուրգը (1891—1967)⁵¹,

Ինչպես տեսնում ենք, 1914—1920 թթ. Անդրկովկաս է այցելել ու այնտեղ գործել ուս գրողների մի ստվար բանակ, որի ազդեցությունն անկասկած իր որոշակի կնիքն է թողել անդրկովկասյան ժողովուրդների հոգևոր մշակույթի վրա: Այդ մթնոլորտում էլ ձևավորվում էր հայ գրականության և արվեստի այն սերունդը, որը դարձավ ինտերնացիոնալիզմի գաղափարների դրոշակակիրը սովետական բազմազգ ժողովուրդների մեծ ու միասնական ընտանիքում:

РУССКИЕ ПИСАТЕЛИ В ЗАКАВКАЗЬЕ И АРМЯНСКАЯ ЛИТЕРАТУРНАЯ ЖИЗНЬ (1914—1920)

АНУШАВАН ЗАКАРЯН

Резюме

Взаимосвязь русских и армянских народов уходит своими корнями в глубокое прошлое. Она еще более упрочивается с половины десятых годов XX в., в период тяжелых испытаний, выпавших на долю армянского народа, когда Закавказье посещают такие представители русской литературы, как В. Маяковский, В. Брюсов, С. Городецкий, В. Каменский, И. Северянин, К. Бальмонт, А. Куприн, Ф. Сологуб, Е. Чириков, Б. Лазаревский, Р. Ивнев, П. Сибирцев, И. Эренбург и многие другие. За время своего пребывания в Закавказье, в частности в Тифлисе, Баку и в Ереване, они принимали активное участие в литературно-культурной жизни края, популяризовали русскую литературу и искусство, широко общались с армянскими литературными кругами, деятелями культуры.

⁵⁰ «Սովետական գրականություն», 1983, № 10, էջ 136—138.

⁵¹ Ա ն ու շ ա վ ա ն Ջ ա ք ա ղ յ ա ն, Իլյա Էրենբուրգը Թիֆլիսում (1920 թ.), («ՀՍՍՀ ԿԱՄ. Արեղյանի անվան գրականության ինստիտուտի Երիաստորդ գիտաշխատողների և ասպիրանտների հանրապետական գիտական VII նստաշրջան: Ձեկուցումների դրույթներ. մայիսի 30-հունիսի 1 1984 թ.», Երևան, 1984, էջ 15—16):